

## ԱԶԳԻ ԵՐԳԻՉԸ

ԵՂԻՇԷ՛ ՄԱՂԱԹԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

### IV

Բանաստեղծական ձիրքը, ինչպէս և ամեն ձիրք, այն սերմն է, որ աճելու ու բեղմնաւորւելու համար կարօտ է արգաւանդ հողի: Հողը տաղանդի համար այն շրջանն է, որտեղ ապրում է նա: Բերրի է հողը՝ ծիլ է արձակում՝ նրա վրայ ընկած սերմը, խոպան է հողը՝ սերմը կորչում է անպտուղ: Նոյն երևոյթը մենք տեսնում ենք և մտաւոր կեանքում. նպաստաւոր են տաղանդը շրջապատող պայմանները, տաղանդը զարգանում է. աննպաստ են՝ մատնւում է կորստի:

Լինում են բացառիկ սերմեր, լի ներքին կենսական ուժով, որ ծիլ են արձակում նաև խոպան հողի ծոցից: Լինում են և արտակարգ տաղանդներ—նրանք հանճար են ասում—որ զարգանում են՝ չընայելով շրջակայ անբարենպաստ պայմաններին: Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ինչպէս խոպան հողի վրայ ընկած սերմը, այնպէս էլ անբարենպաստ պայմաններում գործող տաղանդը չեն կարող հասնել աճելութեան այն սահմանին, զարգացման այն բարձր աստիճանին, որին նրանք կը հասնէին ուրիշ՝ աւելի նպաստաւոր շրջանում: Կարճէ ք երեւակայել որ Լազարեանն ու Լոռու-

<sup>1</sup>) Տես «Մուրճ» № 1892 թ. 11 և 12:

Մեկիքեանը ամբողջապէս այժմեան հայկական շրջանի ծնունդը լինէին, այսինքն բացի հայ ծնւած լինելուց, իրանց ուսումն էլ, զիցուք, մեր թեմական դպրոցներից մէկում լինէին ստացած և մինչև իրանց մահը դատապարտւած լինէին մեր աստածապահ դաւառներից մէկում ապրելու ու գործելու... Այդ անհնարին բան է, որովհետև մեր շրջանը, մեր կեանքի պայմանները, մեր այլ և այլ կրթական հաստատութիւնները չեն նպաստում այդ տեսակ տաղանդների լիովին զարգացման: Մենք ոչ մեր զինւորական ուսումնարաններն ունենք, ոչ էլ զինւորական կամ պետական ծառայութիւն խրախուսող մեծ հասարակութիւն. այն ինչ այդ տեսակ հասարակութեան նմանօրինակ պայմանների ներկայութիւնը անհրաժեշտ էր, որպէս զի Լազարեանը այն նշանաւոր զօրապետը դառար և Լոռու-Մեկիքեանը այն նշանաւոր ռազմագէտն ու պետական մարդը դառնար, ինչպէս մենք նրանց ճանաչում ենք:

Միևնոյնը պէտք է նկատել և գեղարւեստական տաղանդի վերաբերմամբ: Գեղարւեստական տաղանդը an und für sich գրաւական չէ նշանաւոր գեղարւեստական արտադրութիւնների, եթէ այդպիսի արտադրութիւնների հնարաւորութիւնը չի նախապատրաստւած նախորդ և ժամանակակից պայմանների զուգահիշութեամբ: Գեղարւեստական տաղանդը ինքն ըստ ինքեան մարդուն գեղարւեստադէտ չի դարձնիլ բոլորովին այնպէս, ինչպէս բնական քաջութիւնը կամ հզօր կամքի հետ միացած լուրջ և ընդարձակ խելքը մարդուն զօրապետ կամ պետական գործելու պատշաճ ասպարէզ չը լինի: Միթէ Այվազովսկին կարող էր այն առաջնակարգ ծովանկարիչը դառնալ, եթէ իր հայրենի Թէոդոսիայից դէն ոչինչ տեսած չէ լինէր, ոչ մի տեղ ուսած չը լինէր, ոչ մի արւեստակցին կամ հասարակութեան կողմից խրախուս ու քաջալերութիւն գտած չը լինէր:

Հարկաւոր է արդեօք սրանից յետոյ ասել, որ եթէ այլ կերպ լինէին դասաւորւած մեր կեանքի պայմանները և ուրիշ տեսակ պայմանների ներգործութեան տակ զարգանար Գամառ-Քաթիպալի տաղանդը՝ նա ուրիշ կերպարանքով կը ներկայանար մեզ: Իրողութիւնը սակայն այս է, ոչ մեր ազգային կեանքի, ոչ էլ նրա անձնական կեանքի պայմանները նպաստամատոյց չ'եղան, որ նրանից



ճշմարիտ ազգային բանաստեղծ մշակէր: Մեզ, ինչպէս արդէն ակնարկեցինք, միութեան գիտակցութեան շօշափելի նշաններ էին պակաս. նրան, ինչպէս կը տեսնենք, ժողովրդի ներկայի և անցեալի հիմնաւոր ծանօթութեամբ լուսաւորած գեղարւեստական հանձար: Խնդրում ենք ընթերցողից՝ վերանորոգել իր յիշողութեան մէջ այն երկու գլխաւոր շրջանները, որ մենք որոշեցինք Պատկանեանի բանաստեղծական գործունէութեան մէջ: Այդ երկու շրջաններից առաջինը մենք վերջացած ենք համարում 1864 թւին, երբ լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն, իսկ երկրորդը՝ 1881-ին, երբ հրատարակեց նրա բանաստեղծութիւնների երկրորդ՝ լրացրած ժողովածուն: Առաջին շրջանում Պատկանեանին մենք տեսնում ենք Նոր-Նախիջևան, Մոսկա, Թիֆլիս, Դորպատ և Պետերբուրգ. իսկ երկրորդում՝ չը հաշւելով կարճատև ծանապարհորդութիւնները, դարձեալ Նոր-Նախիջևան: Մանկութիւնը նա անց է կացնում իր ծննդավայրում, պատանեկութեան տարիները՝ Ռուսաստանի սրտում, երիտասարդութեան մի երկու տարին միայն՝ Անդրկովկասի մոտաւոր կենդրոնում, իսկ մեծագոյն մասը՝ քաղաքակիրթ գերմանական գաղթավայրում և Ռուսաստանի մայրաքաղաքում, վերջապէս՝ կեանքի մնացած տարիները՝ կրկին իր ծննդավայրում: Ինչպէս պիտի ներգործէին Պատկանեանի մոտաւոր կազմի վրայ այս բազմատեսակ շրջանները: Սկզբնական կրթութիւնը ծնողական ջարկի տակ՝ հոգևորական հօր առաջնորդութեամբ մի հայաշատ քաղաքում որ, ըստ հաւանական աւանդութեան, Անու գաղթականութեան մնացորդների հիմնած ապաստանն է և որ (միտ դնելով մի կողմից բնակիչների լեզւին, նիստ ու կացին ու սովորութիւններին, միւս կողմից՝ նրանց կուլտուրական և մտաւոր յարաբերութիւններին) մի տեսակ օղակ է որ կապում է արևելեան հայերիս արևմտեան հայերի հետ. միջնակարգ ուսումը Լազարեան ճեմարանում, ուր խմբւում են աշխարհիս զանազան ծայրերից՝ տարբեր բարբառով խօսող, տարբեր ծագման ու վիճակի ուսումնաճարաւ հայ մանուկներ. երկամեայ ուսուցցութիւնը Թիֆլիսում՝ Ներսիսեան Դպրանոցի պէս մի բազմատարր ուսումնարանում. երկար տարիներ հիւսիսում իբրև ուսանող կամ պաշտօնեայ դեգերելը, ռուս, հայ և գերմանական ինտելիգենտ շրջաններում պտտելը,

համալսարանական, դասախօսութիւններին, ժամանակի գրական, հասարակական և քաղաքական շարժումներին աւելի կամ պակաս ուշադրութեամբ հետեւելը, իր համաքաղաքացիների հետ անդադար չփակելը, էջմիածին, Պոլիս, Բագու, Գանձակ և այլ հայաբնակ քաղաքներ այցելելը,—այս ամենը հարկաւ առատ սնունդ պիտի տար Պատկանեանի բնածին տաղանդին, որ այնպէս էր տպաւորութեանց ծարաւի, ինչպէս արտը՝ երաշտութեան ժամանակ՝ արձրելի։ Բայց այդ ամենը հերժիք էր արդեօք Պատկանեանից ազգային հայ բանաստեղծ մշակելու համար։ Դժբախտաբար, ոչ. որքան էլ ընդհանրապէս օգտակար և խրատական լինէին զանազան տեղերում և զանազան ժամանակ Պատկանեանի ստացած տպաւորութիւնները, հարազատ ազգային կեանքից չէին դալիս, այլ կամ օտար կամ ազգային կեանքի պատահական հոսանքներից։ Այդ հոսանքների մէջ ամենից աւելի ուսումնասիրւածը և թարմ պահպանւածը բանաստեղծի ծննդավայրն էր. բայց մի Նոր-Նախիջևան հարկաւ չէր կարող ներկայացնել հայ կեանքի ամբողջ պատկերը։ Պատկերի ամբողջացման համար հարկաւոր էր դիմել բուն հայ գաւառները. Պատկանեանը միշտ չուներաւ այդ անելու, և այդ գաւառների կեանքի մասին նա միայն դուշակել կարող էր, ընթերցանութեան վրայ չհնւելով կամ անձամբ դիտելով հայ կեանքը Թիֆլիզում և լսելով իր կովկասցի ընկերների ու ծանօթների պատահական պատմութիւնները Մոսկւա, Դորպատ և Պետերբուրգ։ Դալով Պատկանեանի՝ դէպի Երևանեան նահանգը և դէպի Պոլիս արած ճանապարհորդութիւններին, պէտք է խոստովանել որ այդտեղ էլ մեր բանաստեղծը պատահաբար, անցողակի մօտեցաւ հայ կեանքի աղբիւրներին։ Այսպիսով, առանց չափազանցնել կամենալով՝ կարող ենք ասել, որ այն ժողովուրդը, որ իւրաքանչիւր ազգի էական տարրն է կազմում, այն ժողովուրդը, որի վրայ ծանրանում է հողի իշխանութիւնը և որի հաշին մասամբ միւս դասակարգերն են ապրում, երկրագործ դասը, ազգային ոգու այս հաւատարիմ աւանդապահը՝ սարերով ու ձորերով էր բաժանւած մեր բանաստեղծից։

Այդ ժողովրդի մարդուն՝ հային իր բնութեան գուգում, իր նիստ ու կացով, իր պարզ, նահապետական սովորութիւններով ու աւանդութիւններով, իր միամիտ աշխարհայեցողութեամբ՝ Գամառ-



Քաթիպան քիչ ճանաչեց: Ինքն ըստ ինքեան դա ցաւ չէր լինիլ, եթէ մեր բանաստեղծի ստեղծագործող ընդունակութիւնները եղածից աւելի ընդարձակ լինէին: Հանճարեղ անդրիագործը հնադարեան աւերակների տակից դուրս բերած արձանի բեկորի հիման վրայ վերարտադրում է նախնի վարպետի գեղարւեստական կերտածը. վաղուց տեսած դէմքը վերականգնանում է կտաւի վրայ՝ տաղանդաւոր պատկերահանի վրձնի տակ. լայն քանքարով օժտւած պօէտին շատ անգամ մի քանի գծեր, մի քանի ակնարկներ էլ են բաւական, որպէս զի նա ճիշդ և գեղարւեստօրէն պատկերացնի մեզ ծանօթ առարկաներն ու երևոյթները: Մեր ժողովրդի կեանքին, մեր հայրենիքի բնութեան, մեր ազգային ծէսերին ու սովորութիւններին վերաբերեալ շատ աւելի տեղեկութիւններ հասան Գամառ Քաթիպայի գիտութեանը, քան սոսկ գծեր ու ակնարկներ: Բայց նա զուտ գեղարւեստագէտ չէ, նկարիչ-բանաստեղծ չէ որ այդ ամենը պատկերացնել կարողանայ, և զուտ էսթետիկական դատակշռով վերլուծելով նրա պօէզիան, մենք գոհացում չենք ստանալ:

Մարդկային գործունէութեան իւրաքանչիւր արդիւնք արժանապէս գնահատելու համար պէտք է աշխատել գտնել այդ գործունէութեան կենդանի ներդրը, այսինքն այն հիմնական սկզբունքները, որոնցով ղեկավարել է գործիչը: Առանց դրան՝ քննադատը չի կարող հասնել ճշմարտութեան, որ նրա հետազօտութեան միակ նպատակն է: Արդարացի լինելու համար այս տեսակէտը պիտի ընտրենք և մենք՝ Գամառ-Քաթիպային քննադատելիս:

Ո՞րն է ուրեմն մեր բանաստեղծի պօէզիայի կենդանի ներդրը, ի՞նչ սկզբունքներով է նա ղեկավարւում: Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք բանաստեղծի մի նամակի այս երկոտողում. «Ինչո՞ւ քո ամեն մի տողի մէջ դուրս պիտի չի փայլի հայ լինելը և հայի շահերին (նիւթական և հոգեկան) դու բոլորովին անձնատուր չը պիտի լինես... Սա ուզում եմ (և դու պարտաւոր ես այդ կատարելու), որ քու ամեն մի տողէն հայի ոգի փչէ», — այսպէս էր գրում Պատկանեանը մահից մի տարի ու մի քանի ամիս առաջ մեր նոր սկսող բելլետրիստներից մէկին: Այս երկտողում, մեր կարծիքով, ամփոփւած է Գամառ Քաթիպայի ամբողջ սրբութիւն սրբոցը: Այնպէս զրեւ, որ իւրաքանչիւր տողիդ մէջ փայլի հայ լինելդ, այն-

պէս գրել որ երեւոյ որ դու անձնատուր ես հայի նիւթական և ոգեկան շահերին, այնպէս գրել, որ իւրաքանչիւր տողիցդ հայի ոգի փչէ,—ահա ազգային հայ բանաստեղծի իդէալը։ Զի պահանջուում որ երեւան հանես գրածիդ մէջ քո ուսուսահայ, տաճկահայ կամ պարսկահայ լինելը։ չի պահանջուում որ քեզ կողմնակից դուրս բերես «ազատամիտ», «պահպանողական» կամ «արմատական» կուսակցութեան։ չի պահանջուում որ գրես արեւմտեան կամ արեւելեան հայոց գրական կամ զաւառական բարբառով, այլ պահանջուում է որ, ինչ էլ որ գրես և ինչ ձևով էլ որ գրես, երեւնես ճշմարիտ հայ լինելը։ Բայց ճշմարիտ հայ լինելը գրածիդ մէջ երեւցնելու համար բաւական է ոչ քո հայ ծնած լինելը, ոչ էլ մինչև անգամ գեղարվեստական ձիրք ունենալը։ Ո՛չ, պէտք է նւիրուես հայի շահերին, պէտք է ապրես հայի կեանքով, պէտք է ցաւես և ուրախանաս հայի հետ, պէտք է հաղորդակից լինես հայի յոյսերին, ձգտումներին, իդէալներին... Եթէ այն կեանքը, որով դու ապրում ես, սոսկ ուսահայի, տաճկահայի կամ պարսկահայի կեանք է։ Եթէ այն ցաւերն ու ուրախութիւնները, որոնց հաղորդակից ես եղել, սոսկ տեղական, կուսակցական կամ դասակարգային նշանակութիւն չ'ունեն, այլ ընդհանուր նշանակութիւն։ Եթէ այն յոյսերը, ձգտումներն ու իդէալները, որոնցով դու սողորւած ես, յատուկ պիտի լինեն համայն հայութեան և ոչ թէ նրա այս կամ այն մասին,—այն ժամանակ քո բնատուր տաղանդին է մնում այդ բոլորը արտայայտել այնպիսի բովանդակութեամբ և այնպիսի ձևերով, որոնց մէջ ցոլանայ ազգային հայկական ոգին, և եթէ քեզ յաջողի այդ անել, այն ժամանակ միայն դու կ'արժանանաս ազգային հայ բանաստեղծի կոչման։

Տեսնենք, իրան Գամառ-Քաթիւպային որքան է յաջողել իրազործել այդ իդէալը։

## VII

Պատկանեանի բանաստեղծական գործունէութեան մէջ մեր որոշած երկու գլխաւոր շրջանների համեմատ՝ երկու մասի կը բաժանենք մեր քննութիւնը։ Առաջին մասում կը խօսենք չիսական և վաթսնական թւականներին հրատարակած բանաստեղծութիւն-



ների մասին, իսկ երկրորդում՝ եօթանասնական և ութնական թվականներին հրատարակածների մասին <sup>1)</sup>։

Առաջին շրջանի բանաստեղծութիւնները աչքի են ընկնում մոտիւնների և ձևերի բազմազանութեամբ։ Այդտեղ դուք կը գտնէք և օրօրոցի և մանկական երգեր, և սիրոյ և ուրախութեան երգեր, և հայրենասիրական և կրօնական ոգւով ներշնչւած հաուածներ, և երգիծաբանութիւն, և բալլադ, և պօէմա, և էլեգիա։ Եւ այդ ամենը գրւած է զանազան չափերով՝ սկսած եօթնութնեան չափից մինչև վեցտասանութնեանը, մերթ գրական լեզուով, մերթ նրեանի, մերթ Թիֆլիզի, մերթ Նոր-Նախիջևանի բառաւին մօտիկ լեզուով, մերթ մի խառն ինքնահնար լեզուով, որ թէ գրական է և թէ գաւառական։ Զի երևում որ բանաստեղծը հեռակէլիս լինի որոշ, հաստատ տեսական հայեացքների։ Տպաւորութիւնների ու դիտողութիւնների խաչտաբաղէտ հոսանքի մէջ կարծես նա չի կարողացել կենտրոնանալ։ Առողջ և ազնիւ բնազդումը գրական և հասարակական սկզբունքների տեղն է բռնում։ Գեղարւեստագիտական հոտառութիւնը, բարույ և ճշմարտութեան զգացումը, միացած բուռն հայրենասիրութեան հետ՝ բանաստեղծի միակ ղեկավարն են այս շրջանում։ Զեր առաջ գեղարւեստի հասուն սպասաւոր չի կանգնած, այլ ազգային դպրոցն անցած և գեղարւեստի համը առած պարզ երգիչ, որի դիմագծերը և կերպերը ձեզ չիշեցնում են «գլուխը ամենքի խաթրին զուրբան դնող» «Քեռօղլուի» աշուղին։ դա այն աշուղն է, որ՝

Տխրած որ տեսնի՝ ինքն էլ նրա հետ անկեղծ է տխրում,  
Միծաղողի հետ ինքն էլ է իսկոյն ուրախ ծիծաղում։

<sup>1)</sup> Պատկանեանի բանաստեղծական գործունէութիւնը իսկապէս սկսեց 1850 թւին «Արարատ» շաբաթագրի էջերում մի գրադատ թարգմանական ոտանաւորով («Թռչնակ») և վերջացաւ նրա մահից քիչ առաջ մի արտասահմանեան թերթում տպւած բանաստեղծութեամբ։ Ասկաջն մեր բանաստեղծի վառքը հիմնւած է 1864 և 1881 թվականների ժողովածոներում տպագրւածների վրայ, և մենք միայն այդ ժողովածոներն ինկատի ունենք, թէև նրանք Պատկանեանի ոտանաւորների մի մասն են միայն բովանդակում։

Այդ ոչ անտարբերութիւն է, ոչ էլ երեսպաշտութիւն. այդ անխարդախ սրտի զիւրազգացութիւն է, այդ ուղեցոյցի կարօտութիւն է—մի գիծ, որ միանգամայն բնական է երիտասարդ բանաստեղծի մէջ: Գամառ Քաթիպայի բնաւորութեան այդ յատկանիշ զծիցն է առաջանում այս առաջին շրջանում զրւած բանաստեղծութիւնների մէջ արտայայտող՝ փոխ առնելու հակումը: Երիտասարդ պոէտը իր ստեղծագործութիւններից շատերի մէջ գիտակցաբար թէ անդիտակցաբար արձագանգ է տալիս իր սիրած հայ, ռուս և գերմանացի բանաստեղծներին: Սխալ կը լինէր սակայն կարծելը՝ թէ այդպիսով նա կորցնում է իր ինքնուրոյնութիւնը: Նա այնպէս գիտէ հայացնել և իւրացնել ուրիշից փոխ առածը, նա այնպէս խոր գիտէ զնեւ իր տաղանդի կնիքը իր իւրաքանչիւր զրւածի վրայ, որ գրականութեան հետ սակաւածանօթ ընթերցողի մտքովն անգամ չի անցկենալ, որ Գամառ Քաթիպայի այս կամ այն հատւածը փոխադրւած լինէր ուրիշ հեղինակից: Բացէք մեր բանաստեղծի որ էջը կամենաք և, եթէ դուք նախապաշարւած չէք, ակամայ կը բացականչէք. այստեղ հայի ոգի է փչում, այստեղ հայի հոտ է զալիս: Եւ սակայն ձեր կարդացած էջերի մէջ քանի՜ քանի՜ փոխադրութիւններ օտար բանաստեղծներից: Մենք կանգ կ'առնենք նրանցից մի քանիսի վրայ:

«Աղասու մօր երգը» զրւած է Լերմոնովի «Казачья колыбельная пѣсня» բանաստեղծութեան ազդեցութեան տակ. բացց միւլնոյն ժամանակ, որքան տարբերութիւն այդ երկու զրւածների ոգու մէջ: Այնտեղ հիւսիսային Կովկասի շրջավայր, այստեղ բուն հայ շրջավայր: Այնտեղ մայրը քնեցնում է երեխային՝ պատմելով նրա դուխը զալիք փորձանքները, բացց առ այժմ՝ հանգստացնելով, որ նա քնի՝ քանի՜ հոգս չ'ունի: Այստեղ մայրը զարթեցնում է որդուն, յիշելով վրայ հասած նեղութեան օրերը և յորդորելով որ նա քաջի պէս կուի զնաց թշնամու դէմ:

Դու կը մեծնաս, բոյ կը քաշես— չինար բոյիդ ես զուրբան, Գեղ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան, Իմ մասներով մի ոսկեթել մէջքիդ դոտի եմ կարել,

Գոտիցդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սըրել:

Ձարթիւր, որդեակ, քանի՜ քընես,



Բաց աշերդ այդ հաշխուն,  
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,  
Կեանք ու արևն է տեսնում:

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,  
Ջարթիր, որդեակ, քանի՜ քընես, առ քու թուրը մահաբեր,  
Քու հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,  
Քու եղբարքը գերութեան մէջ... քան, միայն դու ես քընած...

Սրդեօք ձեզ այնպէս չի գալիս, թէ սա բոլորովին ինքնուրոյն գրած լինի. չէք ասում թէ այստեղից հայ հոգի է փչում: «Իոյ կը քաշես, բոյիդ դուրբան, Մասսայ քաջք, քաջ Վարդան, կեանք ու արև...» Ժողովրդական բառերի, ոճերի և անունների ընտրողութիւնը ինքնուրոյն հայ հեղինակ չէ եւթադրել տալիս...

«Բռնի պսակի մէջ աղջկայ հրաժեշտի խօսքերը՝ իր հայրական տանից դուրս գալու ընկերին և իր ամուսնու տանը՝ իրանց մեղամաղձիկ, սրտառու, շեշտերով չիշեցնում են Յովհաննայի հրաժեշտի ողջոյնը Շիլլէրի «Սրէանի Կոյսի» մէջ, բայց ամբողջը հայ ժողովրդական ոգով ներշնչւած մի սրտածմիկ պատկեր է, որ բանաստեղծօրէն ներկայացնում է՝ իր կամքի հակառակ չը սիրած մարդուն գնացած կնոջ դրութիւնը:

«Անձնաս մարդը» փոխադրած է ներկաստից («Нравственный человек»). բայց կարդալով այդ բանաստեղծութիւնը, դուք ձեր առաջ պատկերացնում էք անգութ հայ աղայի տիպը. մի անողորմ մեծատուն, դժուժ կրեսոս, իր զաւակների լոյս օրը սևացնող անսիրտ հայր՝ իր բարոյական այլանդակութեան ամբողջ մերկութեամբ: Նոյն աղաների դէմ է ուղղւած և «Աղէն տանն է» երգիծաբանութիւնը: Թիֆլիսցի երկու պարոնների անպաճոյճ, սրամիտ խօսակցութիւնը սրտալի ծիծաղ և միևնոյն ժամանակ տխուր մտածողութիւններ է առաջ բերում:

Էս է հիմիկայ աղաթը—

Կ'ուզիս ջիգրից տըռաքի.

Թէ քասիբ իս, ջուրը նընկի,

Թէ խօջա իս, տուն մըտի...

Պարոն Սարգսի խօսակցի այս հեզնական փրիստփայութեան տակից դուք հեղինակի բողոքն էք լսում անխիղճ հարստութեան

դէմ: Վերջին երկու տողերը կարճ են և ազդու՝ ազդային առածներին պէս: Եւ սակայն այս ոտանաւորն էլ փոխադրութիւնն է:

Իսկ «Փափ և Շահադան»... մի կը կարծէր որ այդ՝ անհոգ հումորով համեմատ, բնորոշ գաւառական բարբառով գրւած հատւածը բաւական մօտիկ թարգմանութիւնը լինէր գերմաներէնից <sup>1)</sup>, մինչդեռ դա իրողութիւնն է:

Բայց այսքանով չեն սպառւում մեր բանաստեղծի արած փոփոխութիւնները. նոյնքան կամ աւելի թէ պակաս ազատութեամբ փոխադրւած են նաեւ հետեւեալ բանաստեղծութիւնները.

<sup>1)</sup> Այս բանաստեղծութիւնը բնագրի հետ համեմատել ցանկացող բանասէրների դիւրութեան համար դնում ենք աւստիկ երկու տեքստն էլ.  
 Der Papst lebt herrlich in der Welt, Փռանդի փափը խիստ փողփող է,  
 Es fehlt ihm nicht an Ablassgeld, Վեհարանը փառաւոր է,  
 Auch trinkt er täglich seinen Wein, Լաւ գինիի շատ սովոր է,  
 Ich möchte auch der Papst wohl sein. Երանի՛ ես փափ 'լէի:

Doch ach, er ist ein armer Wicht, Վճու՛ մէ, կըրիմ փափի գլուխը,  
 Ein holdes Weib beglückt ihn nicht, Անկնիկ ինչ իմ անուամ փողղը,  
 Er schläft in seinem Bett allein, Լաւ է ուտեմ հաց ու սուխը,  
 Ich möchte doch der Papst nicht sein. Քանց անկընիկ փափի ըլիմ:

Der Sultan lebt in Saus und Braus, Ա՛յ, Շահ-զադի կեանքը լաւ է,  
 Er Wohnt in einem schönen Haus, Կերածը 'ուշ ու փըլաւ է,  
 Voll Wunderschöner Mägdelein, Կնիկտերանց թիւը անբաւ է,  
 Ich möchte Wohl auch Sultan sein. Թողէ՛ք Շահ-զադա ըլիմ:

Doch nein, er ist ein armer Mann, Խուղիմ գլուխը Շահ-զադին,  
 Lbt er nach seinem Alkoran, Լըսելով Մահմադի խրատին,  
 So trinkt er keinen Tropfen Wein, Գինին խսկի չի դնում բերնին,  
 Ich möchte doch nicht Sultan sein. Բաս չուղեցի քու Շահ-զադին:

Getrennt mag ich nicht beider Glück  
 Nur einen enz'gen Augenblick;  
 Doch das geh' ich mit Freuden ein  
 Bald Papst, bald Sultanus zu sein.

Drum, Mädchen, gib mir einen Kuss,  
 Denn ich bin jetzt der Sultanus;  
 Schenk mir das Gläschen wieder ein,  
 Damit ich auch der Papst kann sein.

Մաթօ, կուացիր իմ ճըտին,  
 Որ ջանը դուղ ընկնի փափին.  
 Հազար-փէշումն ածէք գինին,  
 Որ էրվի սիրտը Շահ-զադին:



«Վարդը բացւել <sup>1)</sup>» ա ծաղկոցին» (Գեօթէ) «Sah ein Knab' ein Röslein» յայտնի երգի նմանութիւնն է, «Ոստիկ» (փոխադրած ժողովական <sup>2)</sup> «Листокъ» ոտանաւորից), «Հայոց զինի», «Երբ որ հողից մարդ դարձայ», «Ուսանողի կեանքը» (գերմանացի ուսանող-

<sup>1)</sup> Նմանողութիւնը՝ թէև հեռաւոր, բայց աչքի է ընկնում. ալսպէս օրինակ, բնագրի իւրաքանչիւր տան վերջում կրկնուող այս երկտողը.

Röslein, Röslein, Röslein roth,  
Röslein auf der Heiden.

Մեր բանաստեղծը ալսպէս է փոխադրում (նույնպէս ամեն մի տան վերջում կրկնելով).

Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին,  
Դատոա Դրախտին.

<sup>2)</sup> Ժողովական աղբ ոտանաւորը գրեթէ բառացի թարգմանութիւնն է Անտուան Առնօի մի փոքրիկ բանաստեղծութեան, որի վերնագիրն է «La feuille». Որքան մտաբերում ենք մեր աշակերտութեան ժամանակ-ներից՝ ֆրանսիական բնագիրը ալսպէս է սկսւում.

De ta tige détachée,  
Pauvre feuille desséchée,  
Où vas-tu?

Ժողովական թարգմանութիւնն է.

Отъ дружной вѣтки отлученный,  
Скажи, листокъ уединенный,  
Куда летишь?

Հետաքրքրական է, որ «Ոստիկը» աւելի ֆրանսերէն բնագրին է նման, քան ժողովական թարգմանութեան.

«Ո՛ւր ես առաջ գնում, խեղճ ոստիկ ծառին...»

Ալստեղ «առաջ գնում» և «խեղճ» բառերը ֆրանսիական բնագրի vas-tu? և «pauvre» բառերին են համապատասխան և ոչ թէ ուսուրէն թարգմանութեան «летишь» և «уединенный» բառերին. Սակայն հայերէնի և բնագրի այս նմանութիւնը պատահական պէտք է համարել, որովհետեւ մեր բանաստեղծի դուտը «Արձագանքի» անցեալ տարւոյ համարներից մէկում իր հօր լանձնարարութեամբ խօսելով նրա արած փոխադրութիւնների մասին, վկայում էր որ Պատկանանի աղբիւրը այս դէպ-քում ուռա թարգմանիչն է եղել.

ների երգերից), «Մուրացիկ կին» (Բերանժէի, համեմատէք Նալբաճեանի «Աղբատ կին») <sup>1)</sup> և այլն:

Զերծ չէ մնում Պատկանեանը նաև հայ բանաստեղծների ազդեցութիւնից: Այսպէս, օրինակ, «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը» աղբատ է Ալիշանի (մասնաւորապէս համեմատէք «Պլպուլն Աւարայրի») և ծերունի Գաբրիէլ քահանայի («Վարդան Մամիկոնեան») ընթերցանութիւնից: Մի քանի բանաստեղծութիւնների մէջ էլ («Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ», «Ունայնութեան վրայ», «Գանգատ բաղդէն» և այլն) նկատելի է մեր ժողովրդական երգիչների ազդեցութիւնը: Սակայն, կրկնում ենք, որ քան էլ մեծ լինի Պատկանեանի նմանողութիւնների քանակութիւնը, զրեթէ նրա բոլոր թարգմանութիւնների ու փոխադրութիւնների մէջ այնպէս պաշտօն են փայլում մեր բանաստեղծի առանձնատկութիւնները, որ անիրաւացի չի լինիլ, եթէ նրանց մեծագոյն մասը ինքնուրոյն գրածների տեղ ընդունենք:

Այդ ինքնուրոյն նմանողութիւնների մէջ կայ մէկը, որ կարող է յայտնի չափով բնորոշել մեր բանաստեղծի գրածների ընդհանուր ոգին: Խօսքս «Երկու բանաստեղծի» մասին է: Նեկրասովի և մա-

<sup>1)</sup> «Հաւոց գինին» աղբատ է մի գերմանական երգից, որի առաջին տունն այս է.

Brüder! zu den festlichen Gelagen  
Hat ein guter Gott uns hier vereint,  
Allen Sorgen lasst uns jetzt entsagen  
Trinken mit dem Freund, der's redlich meint.  
Da, wo Nektar glüht, valleralla!  
Holde Lust erblüht, valeralla!  
Wie den Blumen, wenn der Frühling scheint etc.

«Ուսանողի կեանքը» աղատ թարգմանութիւն է գեմաներէնից: Այդ բանաստեղծութիւնը մինչոչ վերնագրով թարգմանած ունի նաև Քերովէ Պատկանեանը («Քնար Հակական» էջ 354—355):

Պէտք է ասել, որ մեր լիշտ փոխադրութիւնները Գամառ-Քաթիպայի երկու ժողովածուներումն էլ տպւած են իբրև ինքնուրոյն բանաստեղծութիւնների: Սակայն «Քնար Հակականի» շնորհիւ վաղուց էր լատինի, որ «Ուսանողը» («Երբ որ հողից մարդ...») և «Աղէն տանն է» ռոմանտիկները թարգմանութիւնների են:



սամբ Գոգոլի («МЕРТВЫЕ ДУШИ», т. I, гл. VII) հետևողութեամբ  
դրւած այդ բանաստեղծութիւնը Պատկանեանի ինքնագնահատու-  
թիւնն է ներկայացնում: Քաղցրախօս պօէտը իր ժամանակակից-  
ների կուռքն է. նրան փառաբանում են, ի պատիւ նրան դեռ նրա  
կենդանութեան ժամանակ արձաններ են կանգնեցնում, որովհետեւ  
նա երգում էր երբ գովելու առիթ կար,

Իսկ երբ որ բասրել պէտք լինէր չարին,  
Քնարը իսկոյն կախում է պատին:

Այլ էր երգիծաբան պօէտի վիճակը. նրան անհաշտ թշնամի  
կարծեցին, նրան մարդկութեան ցեց՝ հռչակեցին.

Լեզուն—մահաթոյն ասացին մարդիկ,  
Ճարտար խօսւածքը—չարութեան գործիք,  
Եւ այն հանճարը, որ նրա բաժին  
Տւաւ ի վերուստ՝—մարդիկ ջանք արին  
Թաղել ցեխի մէջ իրանց վատ կենաց,  
Որի մէջ ինքեանք էին թաթախւած:

Բայց հանճարը չ'ընկճեց.

Անդողող ռոքով անցաւ այս աշխարհ  
Հողին անվրդով, ճակատը պայծառ.  
Եւ մինչև վերջին ռուպէն իր կենաց  
Սրտից չի հանեց հառաչանք, ոչ լաց:

Եւ միայն նրա մահից շատ ցետոյ, երբ նրա մարմինը սողունների  
կերակուր էր դարձել, միայն այն ժամանակ մարդիկ իմացան

Այն ազնիւ սէրը սրտի մէջ փակած,  
Որ կոյր աչքերուն երբէք չ'երևաց.  
Իմացան, որ կար նաև այնպէս սէր,  
Որ հաստ փաթեթով ծաղրի պատած էր.  
Որ քարկոծ արին այն խեղճ բժիշկը,  
Որ ցաւով՝ նոցա բժշկեց վերքը:

Այս անիրաւաբար անարգւած բժշկի դիմագծերում մենք  
Գամառ-Քաթիպայի իրա պատկերն ենք ընդնշմարում. այդ, նրա  
գրւածներից շատերը՝ հէնց նրա գործունէութեան այս առաջին  
շրջանից սկսած՝ դառն ծաղր են հասարակական ախտերի վրայ.  
Բայց այդ ծաղրը դահճի ծաղր չէ, այլ մարդասէրի. նա թելա-

դրած է ճշմարիտ հայրենասիրութիւնից, անկեղծ ցաւից ի տես չարին: Դա դաժան տաղանդ է, որ կեանքի մնացլ կողմերն է միայն տեսնում և կարծես մի առանձին հաճոյք է զգում այդ կողմերը պատկերացնելով: Ո՛չ, Գամառ-Քաթիպան այն տաղանդներից է, որոնք դիտում են կեանքը «СВОВОЗЪ ВИДНЫЙ міру СМѢХЪ И НЕЗРИМЫЯ, НЕВѢДОМЫЯ ЕМУ СІЕЗЫ», որոնց ծաղրի տակ արցունք է թազնւած, անէծքի տակ՝ մրմունջ, հարւածի տակ՝ սէր և սիրտ պատառող կսկիծ:

Ազգային կեանքի այնպիսի բոլէներում, երբ կռւում են երկու իրար ոչնչացնող հոսանքներ, երբ կեանքի հին ձևերը դեռ ամուր են և միայն ընտիր գլուխներում են խաղում նոր կենդանանար իդէալներ, — այդպիսի բոլէներում անսակաս են լինում քննադատութեան և երգիծաբանութեան առատ նիւթ տւող երկւոյթները: Ահա ինչ է պատճառը, որ այդպիսի անցողական ժամանակներում՝ ծաղկում է քննադատական և երգիծաբանական գրականութիւնը: Արիստոփանն ու Իււէնալը, Ռաբլէն ու Մոլիէրը, Հէյնէն ու Բէռոնէն, Դիկկէնսն ու Տեկկերէյը, Գոգոլն ու Շէգրինը պատահաբար շոյս ընկած երգիծաբաններ ու հումորիստներ չեն, այլ ծնունդ իրանց ժամանակի հասարակական, քաղաքական և մտաւոր կեանքի պայմանների Պատահական է և մեր գրականութեան մէջ տիրող քննական ուղղութիւնը. նա մեր անցողական ժամանակի արդիւնք է, հին և նոր գաղափարների կռուի հետեանքներից կամ արտայայտութիւններից մէկը: Այդ ուղղութիւնը, որ աւելի ուշ՝ մտրակողական անունով կնքւեց հրապարակաստութեան մէջ, զգալ տւաւ իր գոյութիւնը նաև զեղեցիկ դպրութեան մէջ: Թէ տաճկահայոց և թէ ռուսահայոց գրականութեան մէջ մի շարք անուններ աւելի կամ պակաս իրաւունքով կարելի է կապել այդ ուղղութեան հետ: Պարոնեան, Գալֆայեան (Ալաֆրանկա), Սունյուլեան, Բաֆֆի, Պռօշեան և մեր երիտասարդ վիպագիրները (Նիրվանդադէ, Լէօ և այլք, որը մասամբ, որն ամբողջապէս) այդ ուղղութեանն են յարւում:

Պատկանեանը մեր տաղաչափ բանաստեղծների շարքում այդ ուղղութեան գլխաւոր ներկայացուցիչը կարող է համարւել, սատիրան նրա պօէզիայի ամենազօրեղ տարրերից մէկն է: Մեր կեանքի



մէջ արմատ բռնած երկու կարգի պակասութիւններ են կազմում այդ սատիրայի նիւթը. 1) Պակասութիւններ, որոնց աղբիւրը պէտք է որոնել հինաւուրց մտաւոր խաւարի և ստրկութեան մէջ և 2) պակասութիւններ, որոնք առաջացել են նորամուտ կեղծ քաղաքակրթութեան հողի վրայ: Հայի անմիաբանութեան ոգին, հայ հոգեւորականութեան անվայել ընթացքը և սոսկալի տգիտութիւնը, հայի նիւթապաշտութիւնը և անտարբերութիւնը դէպի ազգի պիտոյքները, քաղաքացի հայի շռայլ կեանքը, հայի ծնողի բռնակալութիւնը, հայ կնոջ ստրկական վիճակը, հայ հեղինակի նիւթական և բարոյական նեղութիւնները, մայրաքաղաքում կրթւած հայ երիտասարդների և օրիորդների ոգեկան և մտաւոր սնանկութիւնը... այս և սրանց նման ցաւեր է մատնացոյց անում Գամառ-Քաթիկոսն (և՛ և Մրուս, Ունայնութեան վրայ, Հայ և Հայութիւն, Մշակ, Անգլեաս Մարդ, Բռնի Պսակ, Խրատ հայ հեղինակին, Մայրաքաղաքում կրթւած հայ երիտասարդ, Մայրաքաղաքում կրթւած հայ աղջիկն և այլն):

Այդ միւլնոյն ցաւերն են, որ մատնացոյց էին անում և մեր հրապարակախօսները և հրապարակախօսական ոգւով ներշնչւած բանաստեղծները: Բայց այլ են Նազարեանցի, Նալբանդեանի և Շահադիզեանի արտայայտութեան կերպերը և այլ Գամառ-Քաթիկոսինը: Պատկանեանը այդ ինտելիգէնտ հրապարակախօսների համար շատ է գռեհիկ, թէև իր զործածած ձևերով նա էլ շատ անգամ նրանց պէս ինտելիգենտ է երևում: Շահադիզեանը մի ոտով դեռ ճարտասանութեան հողի վրայ է կանգնած, թէև տեսականապէս բողոքում է ճարտասանութեան դէմ: Գամառ-Քաթիկոսն զրեթէ ազատ է ճարտասանութեան ազդեցութիւնից: Շահադիզեանը իր բանաստեղծութիւնների մէջ էլ «հայոց լեզւի ուսուցիչ» է, այդ լեզւի մաքրութեանը՝ նախանձախնդիր պուրիստ. նա սաստիկ զգուշանում է ժողովրդական բառերից ու դարձածներից, իսկ ժողովրդական արտայայտութեան օտարամուտ ձևերից փախչում է՝ ինչպէս ժանտախտից: Մի անգամ ընդունած կանոնը նա աշխատում է խստիւ զործադրել իր բոլոր բանաստեղծութիւնների մէջ. միակերպութիւնը նրա իղէալն է: Այդպէս չէ Գամառ-Քաթիկոսն: Նա դրում է, ինչպէս դալիս է, վերցնում է, որտեղ ձեռքը հաս-

նում է: Նա չի գարշում ոչ մի բառից, ոչ մի ձևից, ոչ մի դարձ-  
ւածից, որովհետեւ՝

Խօջա ու քեսախիբ, տէր ու ծառայ են նըրա սիրական,  
Հաւասար մարդ են թէկուզ քրիստոնեան, թէ մահմեդական:  
Նա պէտք է հասկանալի լինի բոլորին. նրա իդէալը բազմա-  
կերպութիւնն է:

Շահազիզեանի սատիրայի մէջ գերակշռում են հայրենասիրա-  
կան թախծի և սրտմոռութեան տարրերը: Վամառ-Քաթիպայի սա-  
տիրայի մէջ բոլոր տարրերը անբաժան գրկւում են. և՛ թախիժ,  
և՛ սրտմոռութիւն, և՛ անհոգ քրքիջ, և՛ հումոր, և կծու հեգնու-  
թիւն, և՛ դառն սարկազմ:

Շահազիզեանի խստակրօն սատիրիկական մուղան երբէք չի  
թոյլ տալիս իրան ռամիկ հետ զործ ունենալ: Վամառ-Քաթիպայի  
չարածճի մուղային չի խրոնեցնում դարիբ մշեցի բեռնակրի  
արեառ շլինքը, ոչ էլ նրա քրանոտ երեսն ու կոշտացած ձեռները.  
նա մօտենում է նրան իբրեւ եղբօր և կամենում է թափանցել նրա  
հոգու խորքերը, իմանալ նրա ցաւը:

Զուխտակ արտասուէք ջուհար ակի պէս աչքին ցլացին.

«Մըշակ, չիլի՞ թէ միտքդ բերի՞ր քու կարօտած եարին»:

Նա չի խորշում մինչև անգամ Բաքոսի երկրպագուների շրջանից.

Մալապատիկ ծառի տակ

Մեր լոթիքն են նստոտել.

Տկճորներն ու խելադէք,

Իրանց բոլոր մօտ արել:

Մին մինի կենաց են խմում—

Մեռելոց ու կենդանեաց,

Մին մինի բօղազն են խրում

Շամփուրներով խորոված...

Քաշալ գլուխ զուռնաչին

Հառալօ է փչում,

Տիմպլիպիտօն լրսողին

Ղուղն ու ականջն է տանում...

Վամառ Քաթիպան՝ դեմոկրատ երգիծաբան է:

(Ար շարունակել)